

•

82 հազարանոց «Սան- Պաոլո» մարզադաշտում առաջնության տերերի հետ ԽՍՀՄ-ի ֆուտբոլի հավաքականը խաղալով 120 րոպե, հաշտությամբ բաժանվեցին ոչ ոքի հաշվով, բայց այնուամենայնիվ դուրս մնացին առաջնությունից: Դա միակ դեպքն էր, երբ ԽՍՀՄ-ի հավաքականը պարտվեց խաղը այդ ձևով: Ո՞ր ձևի մասին է խոսքը:

---Վիճակահանություն

• Քաղաքական գործիչները միշտ պլանավորում են իրենց ելույթները: Վառ օրինակ է Բուշի ուղերձը կոնգրեսին, որը հաշվարկված էր րոպե առ րոպե: Մակայն մի բան նախագահի թիմը դժվարացել էր ճշգրիտ որոշել: Ի՞նչը:

---Ծափահարությունների տևողությունը

• Ինչի՞ մասին է Կլիմանսոնն ասել. «Նրանց ձևը վկայում է այն մասին, որ ժամանակի ընթացքում բանվորները ջանում են ավելի ու ավելի քիչ»:

---Բուրգեր

• Մի ուսանող, փորձելով գտնել ինտերնետում նյութեր ԱՄՆ պատմության այդ շրջանի մասին, հոգեբուժական հիվանդանոց այցելելու հրավեր ստացավ: ԱՄՆ պատմության ո՞ր շրջանի մասին է խոսքը:

---Մեծ դեպրեսիա

• Դրա ստացման գործընթացը տևում է վայրկյաններ, բայց այն կարող է պահպանվել տասնամյակներով: Եվ հետաքրքիրն այն է, որ այդ ամենը սկսվել է ասֆալտից: Դրա ստացման համար հաճախ խոստանում են լրիվ ուրիշ բան, և երբ երեխաները սպասում են խոստացածին, զարմանում են, չտեսնելով այն: Ինչի՞ մասին է խոսքը:

---Լուսանկար (Ժոզեֆ Նիսեֆոռ Նեյպար 1826թ.-ին մետաղական թիթեղի վրա ստացավ աշխարհում առաջին լուսանկարը, որը պատված էր ասֆալտի բարակ շերտով, իսկ խոստումը՝ «ծիտիկը թռավ»)

• Ալժիրի Սիդդի-Բել-Աբբես քաղաքի բնակիչները չունեն այն խանութից գնելու կարիք: Այդ քաղաքի մոտ գտնվում է մի լիճ, որն ամբողջությամբ *դա է*: Հարց է ծագում, թե որտեղից է առաջացել այդքան *դրանից*: Պարզվում է, որ այն առաջացել է այդ լիճը թափվող երկու գետերի միախառնումից: Դրանցից մեկը հազեցած է երկաթի աղերով, իսկ մյուսը, հոսելով տորֆային ճահիճների միջով, հագեցնում է այդ քաղաղությունը տարրերով: Ասացեք, թե ինչի մասին է խոսքը:

---Թանաք

• Կենտրոնական Հնդկաստանում գտնվող բիլլների ցեղն ունի առասպել ջրհեղեղի մասին: Համաձայն դրա, Աստված որոշել էր ոչնչացնել մարդուն, սակայն մի արարած պատմեց մարդկանց այդ մասին, որի շնորհիվ մարդիկ փրկվեցին: Տեսնելով դա՝ Աստված ներեց մարդկանց, սակայն պատժեց բերանբաց արարածին: Եթե Դուք հասկացաք, թե ինչպես պատժվեց արարածը, առանց դժվարության կասեք նրա անունը:

---ձուկ

• Ըստ Չերչիլի, հանճար չէր այն մարդը, ով ստեղծեց անիվը, հանճար էր նա, ով ստեղծեց...: Ավարտեք միտքը երեք բառով:

---մնացած 3 անիվները

• Որպեսզի այդ նվերը հասցվեր հասցեատիրոջը, օգտագործեցին հսկայական շոգենավ, իսկ ինքը՝ նվերը փաթեթավորվեց 214 ծավալուն արկղերի մեջ: Այժմ ճիշտ հաջորդականությամբ նշեք երկու երկրները՝ նվերը ուղարկող պետությունը և հասցեատիրոջը:

---Ֆրանսիա և ԱՄՆ, խոսքը Ազատության արձանի մասին է

- Միջնադարում լավագույն թրերը պատրաստվում էին Տոլեդոյում: Դրանք առանձնանում էին մեծ ճկունությամբ և պնդությամբ: Այդ հատկությունները ցուցադրելու համար ինչպիսի՞ տեսքով էին դրանք հանվում վաճառքի:

---Շրջանաձև ծոված-----

1. Նոստրադամուսի գուշակություններում «սով» բառը հանդիպում է 38 անգամ, «Ժանտախտ»-ը՝ 42 անգամ, «կրակ»-ը՝ 78, «արյուն»-ը՝ 89, «ճակատամարտ»-ը՝ 111 անգամ: Իսկ ո՞ր բառն է հանդիպում ամենաշատը՝ 139 անգամ:
 2. Շատլ դը Գոլլը Ֆրանսիայի մասին. «Ինչպես կարելի է ղեկավարել մի երկիր, որտեղ 246 տեսակ ի՞նչ կա»:
 3. Հեռախոսի գյուտարար Ալեքսանդր Բելլը ոչ մի անգամ չի զանգել իր մորն ու կնոջը: Ինչու :
- erevi xul ein**
4. Այս երևույթը կատարվել և կատարվում է բոլորիս հետ, քանզի դա կենսական կարևոր երևույթ է: Հնարավոր չէ անել դա բաց աչքերով: Դա անելուց հետո տարբեր երկրներում շրջապատի մարդիկ տարբեր ձև են արձագանքում. օրինակ Մոնղոլիայում ասում են՝ «Թող Աստված ների քեզ», իսկ Ֆրանսիայում և Չեխիայում հակառակը՝ «Աստված օրհնի»: Այժմ անվանե՞ք ոչ թե երևույթը, այլ թե ինչպես են արձագանքում այս երևույթի ականատեսները Հայաստանում:
- erevi aroxjutyun**
5. Նա համարվում է անգլիական գրականության «Առաջին Լեդին»: Իր կարճատև կյանքի ընթացքում նա գրել է 6 վեպ, որոնք աչքի են ընկնում իրենց նրբաճաշակ «անգլիական» հումորով, գործող անձանց կերպարների ռեալիստական կատարյալ նկարագրությամբ, հոգեբանական ապրումների փոխանցմամբ:
-
6. Այս վեպը աշխարհի ամենահայտնի վեպերից մեկն է, Էկրանավորվել է ավելի քան 25 անգամ: Այն գրվել է ընդամենը 3 շաբաթում: Հրապարակումից հետո բոլոր բրիտանական քննադատները դատապարտեցին այն որպես անբարոյական ստեղծագործություն, որոշ քննադատներ պահանջեցին արգելքի տակ դնել այն, իսկ վեպի հեղինակին՝ դատական պատժի ենթարկել, հասարակական բարոյականությունը վիրավորելու համար, սակայն սովորական ընթերցողների կողմից վեպն ընդունվեց մեծ խանդավառությամբ: Այժմ անվանե՞ք ոչ թե վեպը, այլ հեղինակին, ով 2007 թվականին, BBC-ի անցկացրած հատուկ հարցման արդյունքում դարձավ Մեծ Բրիտանիայի ամենասրամիտ մարդը, անցնելով Շեքսպիրին և Չերչիլին:
 7. Ամենաշատը քանի՞ ձի կարելի է տեղավորել շախմատի տախտակի վրա այնպես, որ նրանք իրար չհարվածեն: **32**
-
8. Մի փոքր պատմություն հայտնի էպոսից. «Շատ հայտնի գետի մի ափին ապրում էր արքայադուստ Շավան, իսկ մյուս ափին քաջարի Վարա իշխանը... Դարեր ի վեր նրանք այդպես էլ չկարողացան ապրել միասին...»: Ո՞ր երկրի էպոսից էր

այդ հատվածը, որի գլխավոր հերոսներն են Շավան և Վարան: **Վարչավա
քաղաքի մասին է վարայի վարը շավաի շավան**

Մենք բոլորս կյանքի ընթացքում դա ունենում ենք անխտիր 2 անգամ, իսկ 3-րդ անգամ ունենալու պետք է վճարենք: Ի՞նչն է դա: **ստամ**

Այդ մասնագիտության տեր մարդու հետ հարցազրույցի ժամանակ նա խոստովանեց, որ նախանձում է նկարիչին , քանի որ նրա ստեղծագործությունը շատ երկար է պահպանվում, իսկ իրենը հաշված բոպեներում անհետանում է: Ի՞նչ մասնագիտություն ունի նա: **խ ո հ ա ր ա ր**

Փարիզյան հայտնի մի թերապևտ իր բարեկամի հետ զբոսնելիս խոր գլուխ է տալիս փողոցում հանդիպած տղամարդուն.

__Ո՞վ է նա, և ինչո՞ւ այդպես հարգալից խոնարհվեցիր նրա առաջ, __ հարցնում է բարեկամը:

__Նա ինձ հնարավորություն է տվել 50 000 ֆրանկ վաստակել:

__Նա քո հարուստ այցելո՞ւն է:

__Ոչ, նա իմ հարուստ այցելուի...

Ավարտեք բժշկի խոսքը: **խոհարարն է**

ԱՄՆ-ի այդ գործիչները ըստ այդ դասակարգման հանդես են գալիս հետևյալ հաջորդականությամբ՝ Վաշինգտոն, Ջեֆֆերսոն, Լինքոլն, Համելտոն, Ջեքսոն: Իսկ ո՞վ կլինի հաջորդը այդ ցուցակում: **Գրանտ՝ նա պատկերված է 50 դոլարանոցի վրա**

Ասում են, որ ԽՍՀՄ մինիստրների խոհրդի նիստերից մեկի ժամանակ ջրաօդերևութաբանական ծառայության ղեկավարը հպարտությամբ հայտարարեց, որ եղանակի կանխատեսման ճշտությունը հասցվել է 40%: Նիստին ներկա գտնվող Ստալինը առաջարկեց բարձրացնել կանխատեսման ճշգրտությունը մինչև 60%, և միանգամից էլ բացատրեց շփոթված զեկուցողին, թե ինչպես դա կարելի է անել: Իսկ ի՞նչ էր առաջարկում Ստալինը: **Ստալինն առաջարկում էր տալ ճիշտ հակառակ կանխատեսում, որի ճշտությունը կլիներ 60%**

Ըստ Բաֆֆու՝ ի՞նչն է ազատության մայրը: **Ստրկությունը**

Եվրոպայի հզոր երկրներից մեկի դեղագործական մի ֆիրմա իր դեղորայքի գովազդի համար առաջարկեց պաստառ, որի վրա հաջորդականությամբ նկարված էր.

- Առաջին նկար՝ կին տանջված դեմքով,
- Երկրորդ նկար՝ ընդունում է դեղը,
- Երրորդ նկար՝ կնոջ երջանիկ դեմքը:

Այն մեծ հաջողությունների հասավ Եվրոպայում, սակայն ձախողվեց Մաուրյան Արաբիայում: Ի՞նչն էր պատճառը: **Նրանք կարդում են աջից ձախ**

XX դարի սկզբին վաճառքի էր հանված երկրագնդի ամենամեծ ադամանդներից մեկը՝ 44 կարատ քաշով: Ադամանդը լավ համբավ չէր վայելում: Դրանից առաջ ավելի քան 10 նրա սեփականատերերը դարձել էին սպանությունների, թունավորումների, զոհությունների, սննկության և այլ դժբախտ պատահարների զոհեր: Չնայած այդ

ամենին՝ ադամանդը գնեց մի երիտասարդ գույգ, որը չէր հավատում այդ ամենին: Գնեցին և ուղևորվեցին հարսանեկան ճանապարհորդության: Իսկ ո՞ւր: **Ամերիկա՝ Տիտանիկով**

1953թ. ծով դուռ եկավ լեգենդար միջատլանտյան Մավրիտանիա նավը՝ 20 տարվա ընթացքում պահպանելով «ամենագնա Ատլանտիկայի նավ» տիտղոսը: Հանրության պահանջով կազմակերպվեց աճուրդային վաճառք այն իրերի, որոնք կապ ունեին այդ նավի հետ: Ի՞նչ 10պղնձե առարկաներ վաճառվեցին վերջում, որոնք բերեցին 11 250 000 ֆրանկի եկամուտ: **Մ Ա Վ Ր Ի Տ Ա Ն Ի Ա տառերը**

Միջնադարյան կաթոլիկ վանքերում որոշ արարողություններ սկսվում էին վաղ առավոտյան: Վանականները հաճախ քնում էին այդ արարողությունների ժամանակ: Դրա դեմ պայքարի համար գոյություն ունեին հատուկ մարդիկ՝ արթմնիներ: Նրանք ջահով մոտենում էին քնածին և արթնացնում նրան: Իսկ ինչպիսի՞ պատիժ էր սահմանված քնկոտ վանականների համար: **Նրանք դառնում էին արթմնիներ**

Շեքսպիր. «Մարդու անհատականությունը այգի է, իսկ կամքը՝...»: Ի՞նչ: **Այգեպան Պատմում են, որ Ռոբեսպիերին գլխատելու ժամանակ, երբ նրա գլուխն ընկավ գետնին, մի կին, որի ներկայությամբ ժամանակին Ռոբեսպիերը գլխատել էր նրա երկու որդիներին, չբավարարված համարելով իր վրեժխնդրությունը՝ բացականչեց երեք տառանի այդ բառը: Ի՞նչ բացականչեց որդակորույս կինը:---ԲԻՍ**

1. Հոգեբան Էրիկ Բեռնը գրել է. «Խաղեր, որ խաղում են մարդիկ» գիրքը: Իսկ ո՞րն է նա համարում ամենասարսափելի խաղը: **Պատերազմ**
2. Ասում են, 40-ական թվականներին Ստալինի կողմից Հեռավոր արևելք ուղարկված ռուս սպաները հերթական կենացը բարձրացնում էին Ալեքսանդր 2-րդի համար՝ որոշակի երախտիքով: Ինչու՞ էին Կարմիր բանակի սպաները երախտապարտ նրան: **Նրա համար, որ վաճառել էր Ալյասկան, թե չէ նրանք պետք է ծառայեին հենց Ալյասկայում**
3. Օլեգ Կոզիրևի պատմվածքում ասվում է այն մասին, որ մամոնտները չեն անհետացել, ուղղակի նրանց վրա հարձակվել է նա: Իմ կողմից ավելացնեմ, որ երբ նա հայտվում է պահարանում, տնային տնտեսուհիները վախենում են մնալ առանց զգեստների: Անվանեք *նրան*: **Ցեց**
4. Գերմանացի գրող Բերտոլդ Աուերբախը կարծում էր, որ գումար ձեռք բերելը պահանջում է խիզախություն, այն պահպանելը՝ խոհեմություն, իսկ ի՞նչն է պահանջում արվեստ: **Գումար ծախսելը**
5. Այն բանից հետո, երբ Պելեն թողարկեց իր «Ես Պելեն եմ» գիրքը, կրթության նախարարության կողմից արժանացավ ոսկե մեդալի: Ինչու՞: **Շատերը կարդալ էին սովորում, որպեսզի կարդան այդ գիրքը**
6. Գերմանական գինեգործների խարտիան հստակորեն նշում է, թե ինչ տեղեկություններ պետք է պարունակի գինու 22ի պիտակը: Օրինակ՝ խաղողի տեսակը, բերքահավաքի տարին, արտադրողի անվանումը և այլն: Իսկ ի՞նչ

բառ է սովորաբար առկա պիտակի վրա, սակայն վերը նշված խարտիան չի պահանջում դրա նշումը: **Գինի**

7. Ռեյունուսկե Ակուտագավան ասել է. «Մարդկային կյանքը նման է այդ առարկային, նրան լուրջ վերաբերվելը ծիծաղելի է, անլուրջ վերաբերվելը՝ վտանգավոր»: Ո՞րն է այդ առարկան: **Լուցկի**
8. Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ մոլորված կատուները վերադարձել են տուն՝ հաղթահարելով 100-ավոր կմ-եր: Իսկ ինչո՞վ է նշանակալի Ամադո կատվի դեպքը, երբ նա տուն է վերադարձել՝ անցելով ընդամենը 25կմ: **Կատուն կույր էր**
9. Ռազմական պրոպագանդայի մասնագետները գիտեն, որ ամեն ազգ ունի իր առանձնահատկությունները: Օրինակ՝ համարվում է, որ ամերիկացիները գնահատում են հրամանները՝ հաշվի առնելով դրանց նպատակահարմարությունը, ճապոնացիների համար կարևոր է հարմարավետությունը պատերազմական գործողությունների ժամանակ, ֆրանսիացիները հնարամիտ են և ունեն զարգացած երևակայություն, ինչը չես ասի անգլիացիների մասին: Իսկ ո՞ր ազգի մասին է ասվում, որ նրանց առավելությունը թշնամու նկատմամբ թվային գերակշռությունն է: **Չինացիների**
10. Ասում են Լյուդովիկոս 14-րդը հրամայում էր իր պալատականներին իր քնելուց առաջ քարեր նետել պալատի բակի ավազանը: Ինչո՞ւ: **Որպեսզի վախեցնեն գորտերին, որոնք կարող էին խանգարել Լյուդովիկոսին քնել**